# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 սեպտեմբերի 2016 թվականի N 78 - Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի գ) ենթակետով, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային օգտագործման ընթացիկ վիճակն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

**Հովհաննիսյան Հարություն** – աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ

**Ասրյան Աշոտ** – աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, անդամ

**Կոստանդյան Մուշեղ**– աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին- մարզային հողային պետական տեսչության պետ, անդամ

**Բաբայան Ժորա** – աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ

**2.** Հանձնաժողովին՝ ուսումնասիրություններն իրականացնել եռամսյա ժամկետում, արդյունքների մասին տասնօրյա պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն:

**3.** Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ **Վ. Դավթյանին**:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**2016թ. սեպտեմբերի 20**
**ք. Կապան**